

# Ինչպե՞ս զարգացնել երեխայի պատասխանատվության զգացումը

Յուրաքանչյուրն ունի որոշակի իրավունքներ ու պարտականություններ: Դրանք ունեն թե մեծահասակները և թե երեխաները: Այդ իսկ պատճառով,



ինչքան շուտ Ձեր փոքրիկի մոտ զարգացնեք պատասխանատվության զգացումն ու ինքնուրույնությունը, այնքան շուտ նա կհասկանա կենսական կարևոր երևույթները: Օրինակ, պետք է երեխան հասկանա, որ ընտանիքում յուրաքանչյուրն ունի իր պարտականությունները: Եվ բոլորը

պետք է դրանք կատարեն, անկախ նրանից, ցանկություն կա, թե՛ ոչ: Հաճախ ծնողները չեն շտապում փոքրիկներին ներքաշել տնային գործերի մեջ, մեկնաբանելով, թե առանց փոքրերի «օգնության» գործն ավելի արագ ու լավ է իրականացվում: Բայց դա մեծ սխալ է: Հետագայում ծնողները կզարմանան, եթե իրենց երեխան չցանկանա ոչինչ անել, պարապ թրև գա, ոչնչի չձգտի, որևէ պատասխանատվություն չվերցնի իր վրա և այլն:

Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է վաղ մանկությունից երեխայի վրա թեկուզ փոքր պարտականություններ դնել՝ օրինակ, փոքրիկը կարող է ջրել ծաղիկները: Նախ և առաջ երեխան իրեն կզգա ընտանիքի լիիրավ անդամ, և հետո նա կիմանա, որ պատասխանատու է տնային որևէ գործի համար: Եվ անպատասխանատու վերաբերմունքի համար նրա հետ պետք է խոսել ինչպես մեծահասակի հետ:

Բացի այդ պատասխանատվության զգացումը լավ զարգանում է տնային

Կենդանիների խնամքի մասնակցությունը, որը կենդանի ցանկալի ինչի: Բացատրեք երեխային, որ կենդանուն գնել էք հատուկ իր համար, այլ ոչ թե հայրիկի ու մայրիկի: Իսկ դա նշանակում է, որ հենց ինքը պետք է հոգ տանի կենդանիներին, հետևի մաքրությանն ու զբոսանքի տանի: Պետք է ամեն ինչը միանգամից բարդել երեխայի վրա: Սկզբում նրան օգնության ձեռք մեկնեք, բացատրեք ինչպե՞ս անել այս կամ այն գործը, օգնեք նրան, սակայն հիմնական աշխատանքը թողեք երեխային: Հիշեք, մեզանից յուրաքանչյուրը կյանքում ամեն ինձ ձեռք է բերել աստիճանաբար: Մի մոռացեք երեխային հիշեցնել, որ եթե նա կենդանու հանդեպ անպատասխանատու լինի, ապա ոչ ոք, իհարկե, կենդանուն դուրս չի հանիտանից, բայց այլևս նա չի կարողանա որևէ բան խնդրել ու ստանալ այն:



Արդեն համեմատաբար գիտակից տարիքի երեխաների մոտ պատասխանատվության զգացումը կարելի է զարգացնել նաև գրպանի առօրյա ծախսերի գումարի միջոցով: Մինչ երեխային գումար տալն անհրաժեշտ է նրա հետ զրուցել: Բացատրեք նրան, որ նա արդեն մեծ է, և հիմա հայրիկի ու մայրիկի նման հնարավորություն ունի օգտագործել սեփական գումարը: Բայց այդ փողը նա պետք է խելամտորեն ծախսի՝ գնելով անհրաժեշտ ու օգտակար իրեր՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով մեծահասակի հետ: Մեծագույն սխալ է, երբ գումարը տալուց հետո ծնողները սկսում են հետևել, թե երեխան որտե՞ղ և ինչպե՞ս է ծախսում գումարը: Երեխան նման դեպքում կմտածի, որ իր փոխարեն ամեն ինչ մտածում ու իրեն կառավարում են ծնողները: Երեխան պետք է իմանա, որ դա իր անձնական տարածությունն է, և նա այն կարող է ծախսել, ինչպես կցանկանա: Բայց նաև հենց ինքն է պատասխանատվություն կրում իր ծախսած գումարի համար: Օրինակ, եթե նա ամբողջ գումարը միանգամից ծախսի, ապա որոշ ժամանակ առանց գումար կմնա և դրա մեղավորը հենց ինքն է:



Իհարկե, փոքրիկ մարդու առջև գայթակղությունների մի մեծ շարան է բացվում, թե որտեղ կարելի է ծախսել գումարը և ծնողները ցանկանում են նրան գերծ պահել սխալներից: Բայց որպեսզի երեխայի մոտ զարգանա ինքնուրույնություն, երբեք նրանից ծախսերի հաշվետվություն մի պահանջեք, այլ, պարզապես, հետաքրքրասիրություն ցուցաբերելով,

հարցուփորձ արեք, թե ինչպե՞ս է պատրաստվում ծախսել գումարը: Թող երեխան պատմի իր մտքերը: Եթե, ըստ Ձեզ, նա պատրաստվում է որևէ անպետք իր գնել, ապա նրան բացատրեք, որ Դուք մի փոքր այլ կերպ կվարվեիք: Երեխան պետք է հարազատների կողմից ոգեշնչվի: